«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

ՀՐԱՄԱՆ

N 356-Լ

«20» մայիսի 2020 թ.
ք. Երևան

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ «Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարած արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» թիվ 729-Ն որոշման 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի մայիսի 18-ի 33/2.1/11333-20 հանձնարարականը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մայիսի 14-ի N 74-Ն որոշումը՝

հրամայում եմ.

1. Թատրոնի աշխատակազմի ղեկավար Ա. Դալլաքյանին նշանակել արտակարգ դրության պայմաններում Թատրոնի գործունեության ժամանակ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող պատասխանատու անձ:

2. Թատրոնի աշխատակազմի ղեկավար Ա. Դալլաքյանին՝

ա. ապահովել աշխատողների ջերմաչափումը՝ հեռահար կամ անհատական ջերմաչափով: Յուրաքանչյուր աշխատողի ջերմությունը չափել օրական երկու անգամ (ապահովելով անվտանգ գործելակարգ), որից մեկը՝ աշխատանքի ներկայանալու պահին՝ կատարելով համապատասխան նշում գրանցամատյանում.

բ. աշխատակիցների աշխատավայրում գտնվելու ընթացքում ապահովել բժշկական պաշտպանիչ դիմակներով և ախտահանիչ նյութերով.

գ. միջոցներ ձեռնարկել բացառելու համար մեկանգամյա դիմակների կրկնակի օգտագործումը, ինչպես նաև՝ խոնավացած դիմակների օգտագործումը.

դ. ապահովել տնօրենի առաջին տեղակալի կողմից հաստատված փորձերի ամսական ժամանակացույցը և դրանց մասնակից աշխատակիցների ցանկը, աշխատանքում գտնվելու ժամանակահատվածը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանն իրազեկումը.

ե. ապահովել Թատրոնի աշխատակիցների ձեռքերի լվացման հնարավորությունները՝ հոսող տաք և սառը ջրով.

զ. ապահովել, որ Թատրոնի տարածքում պահպանվի սոցիալական հեռավորություն (առնվազն 1.5 մ.).

է. ապահովել, որ մինչև Թատորն մուտք գործելը յուրաքանչյուր անձի տրվի սույն հրամանի հավելվածում կցված ծանուցագիրը, ինչպես նաև ապահովել.

3. Թատրոնի գեղարվեստաստեղծագործական կազմերի ղեկավարներին՝

ա. եռօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ օպերային թատերախմբի, երգչախմբի, նվագախմբի և բալետային խմբի փորձերը՝ ՀՀ պարետի որոշմամբ սահմանված կարգով կազմակերպելու վերաբերյալ.

բ. եռօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ խմբային աշխատանքների ժամանակահատվածը առավելագույնս կրճատել վերաբերյալ.

գ. եռօրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ բացօդյա միջավայրում խմբային աշխատանքների իրականացման վերաբերյալ.

դ. եռօրյա ժամկետում կազմել ու տնօրենի առաջին տեղակալի հաստատմանը ներկայացնել փորձերի ամսական ժամանակացույցը և դրանց մասնակից աշխատակիցների ցանկը, աշխատանքում գտնվելու ժամանակահատվածը և, ըստ անհրաժեշտության, տրամադրել դրանք ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

4. Թատրոնի գործերի կառավարիչին՝ երկօրյա ժամկետում առաջարկություններ ներկայացնել անհրաժեշտ պարագաների և ախտահանիչ նյութերի ձեռքբերման համար:

5. Սահմանել, որ արգելվում է գրաֆիկով չսահմանված ժամերին, ինչպես նաև առանց դիմակի մուտքը Թատրոն:

6. Սահմանել, որ Թատրոնի վարչական, ինչպես նաև գեղարվեստաստեղծագործական կազմերում չընդգրկված աշխատողները աշխատանքի են ներկայանում իրենց անմիջական ղեկավարների կողմից սահմանված գրաֆիկներով ու ժամկետներում, իսկ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներն ու անմիջական տնօրենին կամ տնօրենի առաջին տեղակալի ենթարկա աշխատողները՝ ցանկացած ժամանակ, ըստ անհրաժեշտության:

7. Թատրոնի գեղարվեստական ղեկավարի տեղակալին՝ ապահովել, որ Թատրոնի անցագրային կետում լինի Թատրոն մուտք գործելու իրավունք ունեցող գեղարվեստաստեղծագործական խմբերի աշխատանքային ժամանակացույցը:

8. Անվտանգության ծառայության պետին՝ միջոցներ ձեռնարկել, որ Թատրոն մուտք չգործեն անձինք, որոնք իրավունք չունեն կամ տվյալ ժամին իրավունք չունեն մուտք գործել Թատրոն կամ չեն ստացել սույն հրամանի հավելված ծանուցագիրը կամ խախտել են սույն հրամանի, ՀՀ կառավարության որոշման կամ պարետի հրամանի պահանջները: Սույն կետի պահանջները խախտած անձինք անմիջապես դուրս են հրավիրվում Թատրոնի շենքից՝ մինչև խախտման վերացումը:

9. Ընդունել ի գիտություն, որ սույն հրամանի պահաջների խախտում կամ պահանջներին չենթարկվելն առաջացնում է օրենքով սահմանված վարչական կամ քրեական պատասխանատվություն:

10. Սահմանել, որ սույն հրամանի պահանջի խախտումը կամ պահանջներին չենթարկվելը համարվում է աշխատանքային կարգապահության կանոնների խախտում և առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

11. Մարքեթինգի ր ՓիԱր բաժնի պետին՝ սույն հրամանն անմիջապես հրապարակել Թատրոնի կայք էջում:

12. Ընդհանուր բաժնի պետին՝ սույն հրամանի պաճեները տրամադրել Թատրոնի համապատասխան ծառայությունների ղեկավարներին:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Կիրակոսյան**

ք. Երևան
«20» մայիսի 2020 թ.